

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԹՌԻԶՔԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետով և «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» 1944 թվականի դեկտեմբերի 7-ի Չիկագոյի կոնվենցիայի N 19 հավելվածի պահանջներն ապահովելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. դեկտեմբերի 10-ի թիվ 1460-Ն որոշմամբ ընդունվել է Հայաստանի Հանրապետության թռիչքային անվտանգության պետական ծրագիրը:

Ելնելով միջազգային ավիացիոն համակարգի անվտանգությունից և կարևորելով այդ համակարգի բոլոր մասնակիցների ջանքերը՝ ուղղված այդ անվտանգության բարձր մակարդակի պահպանմանը՝ Հայաստանի Հանրապետությունը ընդունում է այդ ուղղությամբ Միջազգային Քաղաքացիական Ավիացիայի Կազմակերպության և Եվրոպական ավիացիայի անվտանգության գործակալության փիլիսոփայությունն ու քաղաքականությունը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի համակարգում առաջնահերթությունը տրված է թռիչքների անվտանգությանը:

Թռիչքների անվտանգության ապահովումն ունի բացարձակ գերակայություն ավիացիայի բնագավառի գործունեության կոմերցիոն, սոցիալական և այլ բաղկացուցիչների նկատմամբ ու այն պետք է շարունակականորեն ապահովվի՝ անկախ թռիչքների ծավալի աճից:

Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է մշակել, ներդնել և շարունակականորեն բարելավել Հայաստանի Հանրապետությունում ավիացիոն գործառույթների անվտանգության բարձր մակարդակի ապահովմանն ուղղված ռազմավարություններն ու քաղաքականությունը:

Առաջնորդվելով *«անվտանգությունը առաջնային է» սկզբունքով* Հայաստանի Հանրապետությունը որդեգրում է քաղաքացիական ավիացիայի ոլորտում ռիսկերի հնարավորինս ցածր մակարդակը ապահովելու քաղաքականությունը:

Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է.

- ներդնել և իրականացնել թռիչքային անվտանգության արդյունավետ, փաստերի վրա հիմնված պոռակտիվ կառավարում,
- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը ապահովված լինի անհրաժեշտ ռեսուրսներով և համապատասխան որակավորում ունեցող անձնակազմով՝ որպես

թոփչքների անվտանգության վերահսկող մարմին իր պարտականությունները պատշաճ կատարելու նպատակով,

- ապահովել թոփչքների անվտանգության բարձր մակարդակը, վերահսկել ավիացիոն կազմակերպություններում՝ համաձայն սահմանված չափանիշների և պահանջների ԹԱԿ համակարգերի ներդրման գործընթացը,
- ապահովել թոփչքների անվտանգությանն առնչվող տեղեկատվության պահպանումը, խրախուսել այդպիսի տեղեկատվությունը ներկայացնողներին, ապահովել թոփչքների անվտանգության տեղեկատվության փոխանակումը ավիացիոն իշխանությունների միջև և ավիացիոն բնագավառում,
- աջակցել Հայաստանի Հանրապետությունում թոփչքների անվտանգության վերաբերյալ տեղեկատվության հավաքի և վերլուծության գործընթացին՝ ապահովելով տեղեկատվության պահպանումը և կիրառելով «արդարացի մշակույթի» սկզբունքը,
- ապահովել պատրաստվածությունը ավիացիայի ոլորտում ապագա զարգացումներին համապատասխան միջոցառումների մշակմամբ և պլանավորմամբ:

Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր
քաղաքացիական ավիացիայի
գլխավոր վարչության պետ



Ա. Մոլվեսյան